05.10.2016թ.

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՒԴԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի ուսուցիչներ, մանկավարժներ, կրթության բնագավառի նվիրյալներ

Ընդունեք շնորհավորանքներս և բարեմաղթանքներս Ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Մեր երկրի պետական տոնացույցում հոկտեմբերի 5-ը յուրահատուկ տեղ ունի, և յուրաքանչյուրի հոգում ակնածանք, խորին երախտագիտության զգացում կա «օրվա հերոսների» նկատմամբ:

Մեծ ուսուցչապետերից սկիզբ առած գիտության, իմացության և լույսի ճանապարհը շարունակում է իր անխորտակ ընթացքը նվիրյալ ու իրենց կոչմանը հավատարիմ ուսուցիչների շնորհիվ:

Սիրելի մանկավարժներ

Ձեր գիտելիքները և մասնագիտական որակները, ստեղծագործական ունակությունները և կենսափորձը խիստ անհրաժեշտ են կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքն ու արդյունավետությունն ապահովելու համար: Բոլոր ճանապարհներն անցնում են դպրոցով, և մեր պետության զարգացման ու առաջընթացի, վաղվա քաղաքացու կերտման բարդ ու դժվարին գործի պատասխանատուները հենց դուք եք և այն կատարում եք պատվախնդրորեն:

Առանձնակի սիրով շնորհավորում եմ մեր ավագ սերնդի մանկավարժներին, որոնք անցել են վաստակած հանգստի, սակայն իրենց ներկայությամբ, թողած ձեռագրով և կենսափորձով լավագույն օրինակ են երիտասարդ գործընկերների համար:

Մեր սկիզբը դպրոցն է. թե ինչպիսին կլինի վաղվա քաղաքացին, ինչ հասարակություն կունենանք, կանխորոշվում է հենց այստեղ, որովհետև դպրոցապահպանման, մանկակրթման և դաստիարակման, հայապահպանման ու հայրենասիրության սերմանման բարդ ու պատվաբեր գործը վստահված է ուսուցիչներին:

Հարգարժան մանկավարժներ

Անչափ գնահատելով ձեր վաստակն ու հայրենանվեր աշխատանքը՝ ևս մեկ անգամ շնորհավորում եմ այս գեղեցիկ տոնի առթիվ: Եղեք առողջ ու միշտ կենսախինդ: Թող լուսավոր ու արգասաբեր լինի ձեր մասնագիտական ուղին: Խաղաղություն և բարեկեցություն եմ մաղթում ձեզ և ձեր ընտանիքներին:

Շնորհավոր տոնդ, սիրելի ուսուցիչ, կրթության գործի նվիրյալ: